

## ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Այս գաւառում ևս կրակի պաշտաման վերաբերութեամբ մնացել են զրեթէ այն բոլոր հետքերը, որ նկատուի եւ վարան-դայի և Բորչալուի գաւառներում, ուստի չկամենալով կրկնել, կաւելացնեմ միայն հետեւեալները.

Համարածման չորեքշաբթի օրը կանայք «ֆէլ» են անում, այսինքն իրենց հարեանների տներէց կրակ են գողանում, որ-պէսզի իրենց կովերի կաթը աւելանայ:

Տեառնընդառաջին վառուած «տէրնդէզի» մոխիրը տանում են կարանը շաղ տալիս՝ որպէսզի «չարը խափանուի», ածում են հաւարունը՝ որ հաւերը շատ ձու ածեն, ցանում են անասունների վրայ՝ որ չտոբց, ցաւից ազատուեն. ամուլ կանայք իրենց ուշիու-րի ծայրը վառում են այդ կրակի վրայ՝ որ որդի ունենան:

Կրակի անշէջ պահելու հաւատը մնացել է անթեղի սովորու-թեան մէջ.— երեկոյեան, երբ թոնիրը հետզհետէ հանգչում է՝ մի քակոր են դնում այդ հանգչող կրակի մէջ, որ կամաց-կամաց վառուելով մինչև միւս օրը՝ թոնրի կրկին վառելու ժամանակը տեւէ:

Գուցէ աւելի որոշ լինելու համար հարկաւոր լինի շեշտել, որ օջախի և թոնրի սուրբ համարուելը, սրանց վրայ կնունք և պսակ կատարելը, սրանց անուանով երգուելը այստեղ ևս դեռ մնացել է:

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կատու.— Այս գաւառում ևս կատու սպանելը մեծ մեղք է համարուում և սպանողը եկեղեցական ապաշխարանքի է ենթա-րկում: Այստեղ ևս, ինչպէս Ջաւախքում<sup>1)</sup>, պատմում է, որ կա-տուն Գրիստոսի ձեռքի թաշկինակից է յառաջացել՝ ամօթահար Մահմէտի քթից ընկած երկու անիծած մկները բռնելու:

Կատուն «մուրտաւ» չէ, այլ «հալալ»—չեն գարշում, երբ նա մերձենում է կերակրներին, լիզում ամանները, մինչդեռ մկից, շնից գարշում են:

Շուն.— Մե շունը տան համար լաւ է համարում, որովհետեւ հալածում է չարերին:

Նա տխրում է, երբ տեսնում է մահուան հրեշտակը իրեն տիրոջ տանը մօտենալիս, ուստի և ոռնում է:

<sup>1)</sup> Տես իմ «Ջաւախքի բուրմունք»-եր. 68.

Ո՛չ մի շնատէր իւր շանը ինքը չի սպանում, որովհետեւ նա իւր վերայ երախտիք ունի: Եւ երբ իւր բնական մահով սատկելու է լինում, տէրը կամենալով թեթեացնել նրա տանջանքները գնում է մօտը և ասում. «Մեր աղ ու հացը քե խալալ հինի»: (Մեր աղ ու հացը քեզ հալալ լինի):

Հոգոյս.—Ժամանակով մի հարս տանը լողանալիս՝ սկեսայրը ներս է մտնում: Հարսը սաստիկ ամօթխածութիւնից թռչուն է դառնում և սանրը գլխին հերթիկից դուրս թռչում:

Արօրիկ.—Մեղք է համարում այս թռչնին սպանել, որովհետեւ սրանից ամէն մինը ունի մի ընկեր, որը սաստիկ վշտանալով՝ չի կարողանում տանել այս կորուստը և սատկում է: Արօրիկ սպանողը «իւանջուղ» կոչուած ցաւն է ստանում:

Արագիլ.—Սրան կոչում են լակակ, երբեմն էլ «հաճի-լակ-լակ», հաւանականօրէն թուրքերի ազգեցութեամբ, որովհետեւ նրանք էլ են նոյն մակդիրը տալիս սրանց, կարծելով, թէ Մեկ-կայից են գալիս: Մեղք են համարում սրանց սպանել կամ ֆա-սել, որովհետեւ սրանք ևս արօրիկների պէս զրկուելով իրենց ըն-կերօրից՝ ուրիշը չեն ուզում գտնել և վշտից սատկում են:

Գարնանը՝ երբ սրանք առաջին անգամ երևում են, գիւղա-ցիները մեծ ուշադրութեամբ դիտում են, թէ ի՞նչ կայ նրանց կտուցներում և սրանից գուշակութիւն անում, այսպէս՝ եթէ հացի կտոր լինի՝ առատութիւն է լինելու, եթէ չոփ է՝ (ծղոտ) անբեր-րութիւն, եթէ կտաւ՝ մահ:

Եթէ արագիլը մինի տան կտրանը բոյն շինի՝ այդ տնեցի-ներին բախտաւորութիւն է սպասում:

### ՇԷՄՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նոր-Բայազէտցիները տանը, գերդաստանին պատահած բա-րեբաղդութիւններն ու դժբաղդութիւնները վերագրում են տան շէմքի ազգեցութեան: Այսպէս, օրինակ, եթէ շէմքը բերում ա», նրանից անցած և ներս մտած անասունը, նորահարսը սկսում են գերանալ, օգուտ տալ, երկար ապրել, իսկ եթէ շէմքը չի բե-րում ա», լղարում են, օգուտ չեն տալիս և շուտով մեռնում են: «Բերող շէմք» յարգւում, սիրւում է ոչ միայն իւր տնեցիներից, այլ և զրկիցներից, որոնք նրա կտրանը մատաղ են անում-դառը մորթում են այնպէս՝ որ արիւնը ներքե հոսելով ներկում է դառն ճակատը և շէմք: